

ՏՕՒ ՄՈՒՐԲ ԷՋԱԽԱԾԱՐ

25 ՄԱՅԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Բացատրութիւն	Էջ 2
Այժմէական Հարցեր	Էջ 4
Մերտադուրիւն Մատթէոսի	Էջ 5
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔԷՆ
(9.1-6)

Իմաստութիւնը իր տունը չի նեց,
 եօթը սիւներու վրայ կանգնեց զայն.
 Իր գոհերը մորթեց,
 համեմով խառնեց իր գինին
 եւ կոչուեցի սեղանը պատրաստեց:
 Ապա իր ծառաները զրկեց
 որպէսզի քաղաքին բարձունքներէն կանչեն իր բեռնով.
 «Ո՛վ անզգամներ, ինձի եկէք»,
 եւ պակասամիտներուն ըսեն.
 «Եկէ՛ք իմ հացէս կերէք
 եւ իմ պատրաստած գինիէս խմեցէք.
 Թողուցէ՛ք անզգամութիւնը, որպէսզի ապրիք.
 Իմաստութիւնը փնտռեցէք, որպէսզի փրկուիք,
 եւ խոհեմութեան ճամբան բռնեցէք»:

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՁԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(3.7-4.9)

Այսպէս կ'ըսէ Ամենակալ Տէրը.- «Եթէ իմ ճամբաներէս քալես եւ իմ հրահանգներս կատարես, քեզ իմ տաճարիս կառավարիչ եւ իմ սրահներուս պահապան պիտի կարգեմ, եւ հոս կանգնած հրեշտակներուն պէս՝ ազատ պիտի ըլլաս սրբարանս՝

Մեծ գործով կամ գէնքի ոյժով չէ որ պիտի յաջողիս, այլ իմ Հոգիովս:

իմ ներկայութեանս մտնելու: Լսէ՛ ուրեմն, ո՛վ Յեսու, մեծ քահանայպետ, դուն եւ քու դիմացդ նստած քահանայ ընկերներդ, որովհետեւ դուք գալիք բարիքներուն պատկերացումն էք: Ահա ես պիտի զրկեմ իմ ծառաս, որ Ընձիւղ պիտի կոչուի: Որովհետեւ ահա



Յեսուի առջեւ քար մը կը դնեմ, որ եօթը երեսուցի: Անոր վրայ ես իմ արձանագրութիւնս պիտի փորագրեմ: Մէկ օրուան մէջ պիտի վերցնեմ այս երկրին անօրէնութիւնը: Երբ այդ օրը գայ,- կ'ըսէ Ամենակալ Տէրը,- ձեզմէ իւրաքանչիւրը իր ընկերը պիտի հրաւիրէ իր որթատունկին կամ թղթերին տակ հանգչելու»:

Հրեշտակը, որ հետս կը խօսէր, վերադարձաւ եւ զիս արթնցուց ճիշդ ինչպէս քնացած մէկը կ'արթնցնեն, եւ հարցուց ինձի.

- Ի՞նչ կը տեսնես:
 Պատասխանեցի.

- Ձոյլ ոսկիէ աշտանակ մը կը տեսնեմ, որուն վրայ գնտածեւ ձիթաման մը եւ եօթը ճրագներ կան, իւրաքանչիւրը յատուկ բերանով մը: Աշտանակի կողքին երկու ձիթենիներ կան, մին գնտածեւ ձիթամանին աջին, իսկ միւսը ձախին:

Ապա հարցուցի ինձի հետ խօսող հրեշտակին.- «Ի՞նչ են ասոնք, ո՛վ Տէր»: Եւ պատասխանեց. «Ձե՞ս գիտեր ինչ են ասոնք»: «Ո՛չ, Տէր», - պատասխանեցի: Այն ատեն հրեշտակը ինձի բացատրեց.

«Տէրը այս պատգամը կու տայ Ձօրաբարելի.- "Մեծ գործով կամ գէնքի ոյժով չէ, որ պիտի յաջողիս,- կ'ըսէ Ամենակալ Տէրը,- այլ իմ Հոգիովս: Ո՛չ մէկ դժուարութիւն պիտի կանգնի դիմացդ, եւ նոյնիսկ եթէ լեռան մը պէս ըլլան՝ պիտի հարթուին դաշտի նման: Իմ ծառանգութիւնս եղող տաճարին վերջին քարը դո՛ւն պիտի դնես եւ այնտեղ իմ շնորհքս պիտի բնակի"»:

Տէրը դարձեալ ինծի խօսեցաւ, ըսելով. «Զօրաբաբելի ձեռքերը դրին այս տան հիմերը եւ նոյն այդ ձեռքերը պիտի աւարտեն անոր շինութիւնը: Երբ ասիկա կատարուի՝ պիտի գիտնաք, թէ Ամենակալ Տէրը զրկեց զիս ձեզի»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(9.1-10)**

Արդարեւ, առաջին Ուխտը իրեն յատուկ պաշտամունքի կանոններ եւ երկրաւոր սրբարան մը ունէր, երկու վրաններէ բաղկացած: Նախ կար արտաքին վրանը, Սրբութիւն կոչուած, ուր կային աշտանակը եւ առաջաւորութեան հացերուն սեղանը: Ապա երկրորդ վարագոյրին ետին կար միւս վրանը, Սրբութիւն Սրբութեանց կոչուած, ուր կային ոսկեայ սեղանը՝ խոնկ ծխելու համար եւ ուխտի Տապանակը՝ ներսէն ու դուրսէն ոսկեպատ, որուն մէջ կը պահուէին մանանայով լեցուն ոսկեայ սափորը, Ահարոնի ծաղկած գաւազանը եւ ուխտի տասնաբանեայ պատուիրաններուն քարէ տախտակները: Տապանակին վրայ կային Աստուծոյ փառքը ներկայացնող քերովբէները, որոնք իրենց թեւերով հովանի կ'ընէին Քաւութիւն կոչուած կափարիչին վրայ: Ուրիշ մանրամասնութիւններու մասին խօսիլ չեմ ուզեր հիմա:

Սրբարանը այդպէս յարդարուած էր ուրեմն: Քահանաներ պաշտամունքը կատարելու համար մշտականօրէն կը մտնէին առաջին վրանը: Բայց երկրորդ վրանը միայն քահանայապետը կը մտնէր տարին մէկ անգամ, այն ալ՝ իր եւ ժողովուրդին անգիտութեամբ գործած մեղքերուն փոխարէն զոհի արիւնը մատուցանելու համար Աստուծոյ: Այդ բոլորով Սուրբ Հոգին ցոյց կու տար թէ որքան ատեն որ արտաքին վրանը կանգուն կը մնար՝ բուն Սրբարանին մուտքը մեր առջեւ փակ էր, ինչ որ խորհրդանշականօրէն կը ցուցնէ թէ ներկայիս այդ Սրբարանը բաց է մեր առջեւ: Այնտեղ մատուցուած նուէրներն ու զոհերը չէին կրնար մաքրել պաշտամունքը մատուցանողին խղճմտանքը, որովհետեւ միայն ուտելիքի, խմելիքի եւ մարմնական մաքրութեան համար սահմանուած պէսպէս լուացումներու կապուած էին: Եւ այդ կարգերը ի զօրու էին մինչեւ ուղղութեան, այսինքն նոր կարգերու հաստատման ժամանակը:

... ներկայիս այդ Սրբարանը բաց է մեր առջեւ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(10.22-30)**

Զմեռէր. Երուսաղէմի մէջ տաճարին Նաւակատիքի տօնակատարութիւնը տեղի կ'ունենար: Յիսուս տաճարին Սողոմոնի սրահին մէջ կ'երթեւեկէր, երբ իր շուրջ հաւաքուեցան հրեաները եւ հարցուցին. «Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես. եթէ դուն ես Քրիստոսը՝ յատակ ըսէ՛ մեզի»:

Յիսուս պատասխանեց. «Արդէն իսկ ձեզի ըսած եմ, սակայն չէք հաւատար: Այդ գործերը որ Հօրս անուանով կը կատարեմ, անոնք իսկ կը վկայեն՝ թէ ո՛վ եմ ես: Բայց դուք չէք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէս չէք: Ես ոչխարներս կը ճանչնամ. անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի, ու ես անոնց յաւիտենական կեանք կու տամ, անոնք բնաւ պիտի չկորսուին: Ո՛չ ոք պիտի կարենայ զանոնք յափշտակել իմ ձեռքէս: Հայրս այդ ոչխարները ինծի տուաւ, եւ ոչ ոք կրնայ յափշտակել զանոնք իմ Հօրս ձեռքէն, որովհետեւ Հայրս բոլորէն աւելի մեծ է: Ես եւ Հայրս մէկ ենք»:

Ես եւ Հայրս մէկ ենք:



**ՀՈԳԵԳԱԼՈՒԲՍԷՆ ԵՏՔ Բ. ԿԻՐԱԿԻ
(ԾԻԱԿԱԱ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԱԵՐ - ԹԻԻ 18)**

**ԺԸ
ՏՕՍ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՅՈՂ Ս. ԷԶԱՐԾՕՒԹ**

Նիւթեր.
Տօնին անուրը:
Գրիգոր Լուսաւորիչ եւ եկեղեցակերտումը:
Օրուայ Ս. Գրային ընթերցումները:
Ինչո՞ւ Հոգեգալստեան Բ. Կիրակիին կը կատարուի այս տօնը:

1.- Այլ անունն է՝ «Տօն Եկեղեցւոյ Հաստատեալ ի Ս. Լուսաւորչէ»: Ընդհանրացածը՝ «Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի»: Առաջին անունը մեզի կը յիշեցնէ Գր. Լուսաւորչի կողմէ եկեղեցակերտումի այն աշխատանքը, որ Հայրապետը կատարեց Սոր Վիրապէն ելլելէ ետք: Երկրորդը եւս մեզի կը յիշեցնէ նոյնը, բայց նաեւ

կրնայ թիւրիմացաբար մտածել տալ, թէ տօնը Ս. Էջմիածնի տաճարին կը վերաբերի:

Որպէսզի որեւէ թիւրանք կանխուի՝ կարճ բացատրական մը:

Տօնի անուան ծիրին մէջ, Ս. Էջմիածինը խորհրդանիշն է Հայ եկեղեցւոյ: Իսկ «կաթողիկէ» բառին բուն իմաստն է «ընդհանրական»: Հայ եկեղեցւոյ իբր մէկ անդամը Քրիստոսի Մարմինին՝ յատկանիշներէն մէկն է ընդհանրականութիւնը: Ի՞նչ կը նշանակէ «ընդհանրական»ը: Ամենէն հիմնական կէտերն են. Ա.- Հայ եկեղեցին ընդհանրական է, որովհետեւ իր հիմքը Քրիստոսի անձն է: Բ.- Հայ եկեղեցին ընդհանրական է, որովհետեւ էապէս ի Քրիստոս ըլլալու կոչուած է եւ կ'ըլլայ: Գ.- Հայ եկեղեցին ընդհանրական է, որովհետեւ զինք միաւորողը Ս. Հոգին է: Դ.- Հայ եկեղեցին ընդհանրական է, որովհետեւ իր աւետարանչական առաքելութիւնը համամարդկային է:

Այս «Կաթողիկէ»ն որեւէ կապ չունի յարանուանութիւն նշող «Կաթոլիկ» անուան հետ:

2.- Հայ ժողովուրդին որպէս ամբողջութիւն վերէն կամ Ս. Հոգիով ծննդեան («վերստին ծնունդ») մեկնակէտն է Գ. դարու վերջաւորութիւնը եւ Դ. դարու սկիզբը, երբ Գր. Լուսաւորիչ խոր Վիրապէն ելլելէ ետք, անմիջապէս կը ձեռնարկէր իր առաքելութեան:

Կէս գիշերուայ մը մէջ, մինչ Հայրապետը աստուածային նախախնամութեան վրայ կը խորհրդածէր, «յարթնութեան տեսիլ» կ'ունենար, որով իրեն կը յայտնուէր Միածինը, որ «ի կերպարանս լուսոյ»

երկինքէն իջնելով հայոց արքունիքին մօտ՝ ձեռքին բռնած ոսկեղէն ուռնակը կը զարնէր գետին եւ մերձակայ հեթանոսական պաշտամունքի վայրը կը դղրդեցնէր: Այդ հարուածին տեղը Էջմիածնի շրջապատին Տրդատայ Դռուն է: Իսկ հեթանոսական պաշտամունքի վայրը՝ Էջմիածնի Մայր տաճարին ներքեւ է: Համաձայն Օրմանեանի, տեսիլքով նկարագրուած հաւատքի կառոյցը Ս. Էջմիածնի Մայր տաճարին շէնքը չէ, այլ Էջմիածնի շրջափակին մէջ գտնուող չորս եկեղեցիները, այսինքն՝ Մայր տաճարը, որուն բուն անունը

Ս. Աստուածածինն է, եւ Սրբոց Հռիփսիմեանց, Գայրանեանց եւ Շողակաթ վկայարանները:

Լուսաւորչի հրամանին վրայ բազմութիւններ գործի կը լծուին. մէկը վէմ կը բերէ, մէկը քար, մէկը աղիւս, մէկը փայտ: Կիներն ալ կ'օգնէին: Եկեղեցաշինական այս աշխատանքին կը մասնակցին նաեւ թագաւորը՝ Տրդատ, թագուհին՝ Աշխէն, եւ թագաւորին քոյրը՝ Խոսրովիդուխտ:

Ազաթանգեղոս Տրդատ թագաւորի մասնակցութեան մասին հետեւեալ խորիմաստ պատկերը տուած է. «Թագաւորը եկաւ եւ հրաժեշտ խնդրեց Ս. Գրիգորէն: Ապա Մասիսի վերեօթնօրեայ ճամբայ գնաց: Հսկայազօր թագաւորը այն լեռան գլուխէն՝ ոչ մարդու կողմէ, ոչ ալ բազմութեան կողմէ շալկուելիք կարծր, անտաշ, անկոփ, խոշոր, ծանրածանր, երկայն ու ստուարածաւալ եւ մեծամեծ ութ քարեր վերցնելով՝ իր թիկունքին դրաւ եւ բերաւ վկայարաններուն մօտ»:

Ս. Էջմիածնի Մայր տաճարին սկզբնական վիճակը եղած է «բարձր քաղաքորմով փակեալ», «դրամբք եւ դռնփակօք ամրացուցեալ», եւ որու կեդրոնին գետեղուած է փրկչական խաչի նշանը, տեսիլքով յայտնուած ոսկեխարիսխ հրեղէն սիւնին օրինակով:

3.- Օրուայ Ս. Գրային ընթերցումներն են. Առակներու Գիրքէն՝ 9.1-6: Զաքարիա Մարգարէն՝ 3.7-4.9: Եբրայեցիներու Նամակէն՝ 9.1-10: Եւ Յովհաննէսի Աւետարանէն՝ 10.22-30:

Առաջին ընթերցումը: Իմաստութեան մասին է (այսինքն՝ քրիստոնէական ընկալումով՝ Աստուածորդիին), որ իր տունը շինեց եւ գայն կանգնեց «եօթ սիւներու վրայ»: Այդ եօթ սիւները հասկցուած են՝ իբր առաքեալներուն Քրիստոսանուէր ծառայութեան խորհրդանիշ, կամ խորհրդանիշ Ս. Հոգիի շնորհներուն (տե՛ս Ես 11.2): Արդ, իմաստութիւնը կը հրաւիրէ, որ մարդիկ անզգամութենէ հրաժարին, խոհեմութեան ճամբան բռնեն, ու իր «հաց»էն ուտեն եւ իր «գինի»էն խմեն, որպէսզի փրկուին:

Երկրորդ ընթերցումը: Աստուած կը հրաւիրէ կրօնական դասը իր ճամբաներուն մէջ քալելու եւ կատարելու իր հրահանգերը: Թէ ինչո՞ւ համար հրաւէրը կ'ողողէ կրօնական դասին. որովհետեւ անիկա «գալիք բարիքներուն պատկերացումն» է: Մարգարէին միջոցով Աստուած կը յայտնէ իր «ծառայ»ին («Ընձիւղ» անուն) առաքումը: Քրիստոնէական մեկնաբանութիւնը այս ծառային մէջ Քրիստոսը տեսած է: Անոր գալուստով «այս երկրին անօրէնութիւնը» պիտի վերնայ, եւ Աստուծոյ հաւատարիմ մարդիկ իմաստութեամբ պիտի ապրին: Աստուծոյ հրեշտակը մարգարէին կը հրամայէ բարելակական գերութենէն Երուսաղէմ առաջին դարձողներու դեկավարին՝ Զօրաբարելի

... իրեն կը յայտնուէր Միածինը, որ «ի կերպարանս լուսոյ» երկինքէն իջնելով հայոց արքունիքին մօտ՝ ձեռքին բռնած ոսկեղէն ուռնակը կը զարնէր գետին եւ մերձակայ հեթանոսական պաշտամունքի վայրը կը դղրդեցնէր:

պատգամել, թէ մեծ գօրքով կամ գէնքի ոյժով չէ որ պիտի յաղթէ, այլ Ս. Հոգիով: Աստուծոյ Հոգին կու տայ այն գօրութիւնը, որուն դիմաց ոչ մէկ դժուարութիւն կրնայ կանգնիլ. նոյնիսկ եթէ որեւէ դժուարութիւն լերան մը չհափ ըլլայ՝ պիտի հարթուի «դաշտի նման»:

Երրորդ ընթերցումը: Հին Ուխտի պաշտամունքի վայրը կը նկարագրէ, ըսելու համար թէ՛ անոր սրբարանին մուտքը կրօնական դասէն զատ՝ մարդոց առջեւ փակ էր: Ուստի, այնտեղ տարուող ընծաներն ու գոհերը «մատուցանողին խշճմտանքը» չէին կրնար մաքրել: Քրիստոսի հետ հին կարգերը անցան, եւ «նոր կարգերու» այս ժամանակին մէջ՝ ամէն ոքի առջեւ այդ սրբարանը բաց է: Եւ «նոր կարգերուն» սրբարանը Քրիստոս ինքն է:

Չորրորդ ընթերցումը: Զինք հարցուփորձելու եկած հրեաներուն Յիսուս կը յայտնէ Հօր Աստուծոյ հետ իր «մէկ»ութիւնը: Թէ՛ իր գործերը Հօր անունով կը կատարէ: Ինք առաքուած է որպէս հովիւ՝ Աստուծոյ իրեն տրուած ոչխարները առաջնորդելու: Եւ ինք իրեն հետեւողներուն «յաւիտենական կեանք» կու տայ, այսինքն՝ կեանքի այն որակը՝ որ Աստուծոյ հետ հաղորդակցութիւն է:

Չորս ընթերցումները կը յայտնեն որ հաւատացեալները ժողովողը Հօր Աստուծոյ Իմաստութիւն՝ Յիսուսն է: Ան Ս. Հոգիին միջոցով իր եկեղեցին կը կազմէ եւ կ'առաջնորդէ:

4.- Հոգեգալուստի տօնը եկեղեցւոյ համաշխարհային առաքելութեան մեկնակէտային առիթը կը յիշատակէր: Կաթողիկէ Ս. Էջմիածնի տօնն ալ այս Կիրակիին կատարել որոշուած է՝ Հայ եկեղեցւոյ մեկնակէտային դէպքը՝ Հայ ժողովուրդի առ Քրիստոս դարձը յիշատակելու համար: Այս ըսել չէ, թէ Հայ եկեղեցւոյ ծագումը Գր. Լուսաւորիչով եղաւ, որովհետեւ անիկա առաքեալներու քարոզութեան մէջն է: Ինչպէս եկեղեցւոյ ծագումը Հոգեգալուստի դէպքին մէջ չէ, այլ Քրիստոսի յարութեան դէպքին. նոյնպէս ալ Հայ եկեղեցւոյ ծագումը Քրիստոսի առաքեալներուն կողմէ էապէս յարութիւնը աւետարանող քարոզութեան մէջն է: Իսկ 301-ով խորհրդանշուած դէպքը՝ Հայ ժողովուրդին կողմէ իբր ամբողջական միաւոր Քրիստոսի հետեւիլն է, եւ անոր Աւետարանին սպասարկումը՝ ոչ միայն նեղ ազգային ծիրին մէջ, այլեւ շրջապատի ժողովուրդներու կեանքին մէջ. սկզբնական Հայ եկեղեցին ազգային եւ համամարդկային առումներով առաքելութեան եկեղեցի էր:

Հովիտ
ԳԹ

Այս խորագրին տակ, որոշ հերթա-կանութեամբ պիտի ներկայացնենք հոգե-ւոր կեանքին առնչուող հարցեր ու պատասխաններ: Կրնաք ձեր հարցումները յղել eglise58@sourphagop.com ե-հասցէին:

Հարցում. Ինչո՞ւ եկեղեցի երթամ, մանաւանդ որ Յիսուս ըսաւ. «Ռուն երբ կ'աղօթես՝ մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ քու երկնաւոր Հօրդ» (Մտ 6.6): Կը նախըտնրեմ տունը մնալ ու առանձին աղօթել:

Պատասխան. Աղօթելու 2 եղանակներ կան. անհատական եւ հաւաքական: Երկուքն ալ հիմնական են մեր հոգեւոր զարգացման համար: Յիսուս այս ըսելով կը փորձէր կեղծաւորութենէ զգուշացնել իր հետեւորդները: Այս խօսքէն անմիջապէս ետք անոնց սորվեցուց ինչպէս աղօթել. «Ուրեմն այսպէս աղօթեցէք. - Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի անունդ...» (Մտ 6.9): Ան ըսաւ «Հայր մեր» եւ ոչ թէ «Հայր իմ»: Այսպիսով ան հաստատեց թէ նոյնիսկ երբ առանձնակի կ'աղօթենք անուղղակիօրէն դուրս կու գանք մեր մեկուսացումէն՝ հաստատելով որ եկեղեցւոյ անդամ ենք:

Աղօթել կը նշանակէ Աստուծոյ ներկայութեան ըլլալ: Յիսուս ըսաւ. «Որովհետեւ ուր երկու կամ երեք հոգի իմ անունովս հաւաքուին, ես հոն եմ՝ անոնց միջեւ» (Մտ 18.20):

Յիսուսի յարութենէն ետք, առաքեալները միասին էին երբ Ան յայտնուեցաւ:

Աղօթքը Աստուծոյ հաղորդութիւնն է: Եթէ ես իմ աղօթքիս մէջ Աստուծոյ կը հաղորդուիմ, եւ դուն քու աղօթքիդ մէջ Աստուծոյ կը հաղորդուիս, արդէն անտեսանելիօրէն կապուած ենք իրարու, ուստի բնական է որ քով քովի գանք տեղի եւ ժամանակի մէջ՝ հաւաքականօրէն հաղորդուելու Աստուծոյ, միանալու Անոր մէջ եւ տօնելու մեր հաղորդութիւնը:

Աղօթքը մեզ կը միացնէ Աստուծոյ եւ իրարու: Այլեւս մեկուսի անհատներ չենք այլ միացած իր մէջ: «Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք» (Հռ 12.5), ուրեմն բնական է որ մէկտեղ հաւաքուինք:

Աղօթքը բաժնեկցիլ է: Կը հաւաքուինք որովհետեւ ատիկա Յիսուսի պատուէրն էր.

Աղօթքը մեզ կը միացնէ Աստուծոյ եւ իրարու:

«Ապա հաց առաւ, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, կտրեց եւ աշակերտներուն տուաւ, ըսելով. -Ասիկա մարմինս է, որ ձեզի համար տրուած է: Ասիկա կատարեցէք իմ յիշատակիս համար» (Ղկ 22.19): Երբ կը հաւաքուինք, կը պատուենք Յիսուսի խնդրանքը եւ կը բաժնենք իր մարմինն ու արիւնը: Այսպիսով կը միանանք, կը դառնանք իրարու նեցուկ եւ հոգեւոր ճանապարհի ուղեկից: Այսպիսով ցրուած չենք եւ գիտենք որ միութիւնը զօրութիւն է: Չարը աւելի կարելիութիւն ունի մեզ պարտութեան մատնելու՝ երբ առանձին ենք: Մասնաւորաբար այս անհատապաշտ ժամանակներուն, երբ մեկուսացնենք մենք մեզ, շատ դիւրութեամբ ես-ին զոհ կը դառնանք, եւ Ամբողջին՝ Աստուծոյ հետ մեր կապը կը կորսնցնենք:

Բնականաբար մեր անհատական կեանքերուն մէջ, բացի առօրեայ մենիկ պահերէն, կայ ժամանակ, երբ մենութեան մէջ աղօթքի պէտք է տրամադրուինք, մանաւանդ անցումնային հանգրուաններու կամ անհրաժեշտ որոշումներէ առաջ՝ պատրաստուելու կեանքի մասնայատուկ շրջանի, մը ինչպէս Յիսուս իր երկրաւոր կեանքի ընթացքին իր առաքելութեան սկսելէն առաջ՝ 40 օրեր անապատ քաշուեցաւ:

Աշակերտները միասին կ'աղօթէին երբ Սուրբ Հոգին ստացան:

Եկեղեցին կը պատուիրէ եւ կը քաջալերէ հաւատացեալը որ գոնէ Կիրակնօրեայ դրութեամբ Յիսուսի պատարագին մասնակցի ու հաղորդուի:

Աշակերտները միասին կ'աղօթէին երբ Սուրբ Հոգին ստացան:

Եկեղեցին դարերու ընթացքին իմաստութիւն հաւաքած է եւ Անոր անդամները որպէս Քրիստոսի մարմին իրաւունքն ունին իմաստութեան այդ հորէն ըմպելու: Երբ կը մեկուսանանք մենք մեզ կը զրկենք անցեալի փորձառական գիտութենէն եւ կ'իյնանք նոյն այդ սխալները կրկնելու վտանգին մէջ: Եթէ կը խուսափինք եկեղեցի յաճախելէ, լաւ է որ մենք մեզի հարց տանք թէ ինչո՞ւ: Եթէ, օրինակի համար, չենք ախորժիր այս կամ այն անձէն՝ այս կամ այն պատճառով, հաւանական է որ հոգեւոր աշխատանք կայ տանելիք...:

Կարելոր է յիշել, թէ իւրաքանչիւրս Քրիստոսի մարմնին անդամներն ենք, բոլորս ալ պէտք է պատասխանատուութեան մեր բաժինը վերցնենք, նախ՝ մենք մեր, ապա միւս անդամներուն եւ ինքնաբերաբար Աստուծոյ նկատմամբ

Կ.Ն.

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ Ա. Յիսուսի Ազգաբանութիւնը եւ Ծնունդը (1.1-2.23):
 Բ. Յովհաննէս Մկրտիչի Առաքելութիւնը (3.1-12):
 Գ. Յիսուսի Մկրտութիւնը եւ Գործերը Գալիլիայի Մէջ (4.12-18.35):
 Դ. Գալիլիայէն Երուսաղէմ Երթը (19.1-20.34):
 Ե. Վերջին Շաբաթը Երուսաղէմի Մէջ եւ Շրջակայքը (21.1-27.66):
 Զ. Յիսուսի Յարութիւնը եւ Երեւումը Իր Աշակերտներուն (28.1-20):

Ս Ե Ր Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա.- Յիսուսի Ազգաբանութիւնը եւ Ծնունդը (1.1-2.23):

«Այս է ազգաբանութիւնը Յիսուս Քրիստոսի, որ Դաւիթի որդին է եւ Աբրահամի որդին» (1.1): Այս համարը ներածութեան մը պէս սկիզբէն կը սահմանէ աւետարանին բովանդակութիւնը կամ անոր հիմնական գիծը կը յայտնէ: Այս երկու տողերը, հետեւաբար, ամբողջ գիրքին մասին բան մը կ'ըսեն: Ինչպէ՞ս:

Նախ ըսեմ, որ գրաբարը յունարէն բնագրին հետեւելով «Գիրք ծննդեան» կ'ըսէ «Ազգաբանութիւն» բառին տեղ, որ սերնդաբանութիւն կը նշանակէ: 1.2-16 համարները կը ներկայացնեն Յիսուս Քրիստոսի նախնիքները. ցոյց կու տան՝ թէ ան որո՞նց սերունդէն է:

«Դաւիթի որդին է»: Ի՞նչ ըսել կ'ուզուի այս հաստատումով: Անկասկած միայն ցեղային կապ մը յայտնելու համար չէ, այսինքն՝ միայն ըսելու համար չէ, թէ Յիսուս հրեայ ցեղի զաւակ էր: Դաւիթի տունը թագաւորական ընտանիք էր: Եւ այդ տան խոստում մը տրուած էր Աստուծոյ կողմէ թէ՛ «քու տունդ եւ թագաւորութիւնդ քու առջեւը յաւիտեան ապահով պիտի ըլլայ, քու աթոռդ յաւիտեան հաստատ պիտի մնայ» (Բ. Թգ 7.16): Մանաւանդ այս խոստումն է, որ

աւետարանիչը կ'ուզէ թելադրել՝ Յիսուսի համար «Դաւիթի որդին է» ըսելով:

«Աբրահամի որդին» ըսելով, աւետարանիչը կը թելադրէ, որ Յիսուս ժողովուրդի մը կեանքին մէջէն կու գայ կամ ժողովուրդի մը զաւակն է: Ինչպէս Պօղոս առաքեալ գրած է. «Քրիստոս մարմնաւորապէս հրեայ էր (հմտ շն 9.5): Սակայն «Աբրահամի որդին» ըսելը ուրիշ միտք մըն ալ ունի: Աստուած խոստում տուած էր Աբրահամի եւ ըսած՝ «Քեզ մեծ ազգ պիտի ընեմ... երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին» (Ծն 12.2, 3), նաեւ թէ՛

«Քեզ օրհնելով պիտի օրհնեմ ու քու սերունդդ երկնքի աստղերուն ու ծովեզերքը եղած աւազին պէս խիստ պիտի շատցնեմ...» (22.17): Այդ սերունդը Յիսուս ինքն է, որուն միջոցով է, որ Աբրահամի օրհնութիւնը կամ ճշմարիտ Աստուծոյ հաւատքին օրհնութիւնը բոլոր ազգերուն վրայ կը տարածուի:

Իսկ «Յիսուս Քրիստոս»ը ի՞նչ կը նշանակէ: Յիսուսը անունն է, որուն եբրայերէնը՝ Եիշուս՝ «Տէրը կը փրկէ» կը թարգմանուի: «Քրիստոս»ը տիտղոս է, որ յունարէն թարգմանութիւնն է եբրայերէն «Մաշիա»յին, կամ ինչպէս մենք կը գործածենք՝ «Մեսիա»յին, եւ որ «Օծեալ» իմաստը ունի:

Ուստի, Մատթէոս աւետարանիչ իր աւետարանին սկիզբէն մեզի կ'ըսէ, թէ Յիսուս եբրայեցի ժողովուրդին բազում դարեր ահնկալած Օծեալ Փրկիչն է, որուն իշխանութիւնը «յաւիտեան հաստատ պիտի մնայ»: Ան իրականացումն է Աբրահամի եւ Դաւիթ թագաւորի եղած խոստումներուն: Ի՞նչ բան աւելի հետաքրքրական պիտի ըլլար հրեայ անհատին կամ հաւաքականութեան, քան՝ «Քրիստոս» տիտղոսը: Աւետարանիչը ըսել կ'ուզէ թէ՛ դուք Մեսիան կը սպասէիք, ահա ձեր սպասածը՝ Յիսուս ի՞նքն է:

«Աբրահամ ծնաւ Իսահակը, Իսահակ՝ Յակոբը, Յակոբ՝ Յուդան եւ անոր եղբայրները, Յուդա իր Թամար կնոջմէն՝ Փարէսն ու Զարան, Փարէս ծնաւ Եզրոնը, Եզրոն՝ Արամը, Արամ՝ Ամինադաբը, Ամինադաբ՝ Նասսոնը, Նասսոն՝ Սալմոնը, Սալմոն իր Ռախաբ կնոջմէն ծնաւ Բոոսը, Բոոս իր Հուլի կնոջմէն՝ Օբէդը, Օբէդ՝ Յեսսէն, Յեսսէ՛ Դաւիթ թագաւորը: Դաւիթ թագաւոր ծնաւ Սողոմոնը Ուրիայի կնոջմէն, Սողոմոն ծնաւ Բոբոամը, Բոբոամ՝ Աբիան, Աբիա՝ Ասաֆը, Ասաֆ՝ Եոսաֆատը, Եոսաֆատ՝ Եորամը, Եորամ՝ Ոզիան, Ոզիա՝ Եոաթամը, Եոաթամ՝ Աքազը, Աքազ՝ Եզեկիան, Եզեկիա՝ Մանասէն, Մանասէ՛ Ամոսը, Ամոս՝ Եոսիան, Եոսիա՝ Եքոնիան եւ անոր եղբայրները, Բաբելոնեան գերութեան շրջանին: Բաբելոնեան գերութենէն ետք Եքոնիա ծնաւ

Սալաթիէլը, Սալաթիէլ՝ Զօրաբաբէլը, Զօրաբաբէլ՝ Աբիուզը, Աբիուզ՝ Եղիակիմը, Եղիակիմ՝ Ազորը, Ազոր՝ Սադոկը, Սադոկ՝ Աքինը, Աքին՝ Ելիուզը, Ելիուզ՝ Եղիազարը, Եղիազար՝ Մատթանը, Մատթան՝ Յակոբը, Յակոբ ծնաւ Յովսէփը, որ Մարիամի նշանածն էր, եւ Մարիամէն ծնաւ Յիսուս, որ կոչուեցաւ Քրիստոս» (1.2-16): Այս ցանկը մանրամասնօրէն պիտի չքննենք: Այլ միայն մէկ-երկու բաներ պիտի մատնանշեմ:

Աստուածաշունչի ազգաբանութիւնները միտք մը կ'արտայայտեն: Ինչո՞ւ համար են անոնք: Ազգաբանութիւնները գրուած են ցոյց տալու համար՝ 1.- Պատմութեան անխափան շարունակականութիւնը (անոնք ամբողջ պատմութեան մը ամփոփումն են), եւ 2.- Կրօնական փորձառութեան շարունակականութիւնը, ըստ որուն Աստուծոյ կամքին ենթակայ է պատմութիւնը, եւ թէ Աստուած նպատակ մը ունի անոր համար.

պատմութեան համար սահմանաւոր նպատակը մարդուն փրկութիւնն է:

... պատմութեան համար սահմանուած նպատակը մարդուն փրկութիւնն է:

Յիսուսի ազգաբանութիւնը սկսելով Աբրահամէն՝ կը հասնի Յովսէփի եւ Յիսուսի: Բայց Յիսուս Յովսէփի հետ մարմնաւոր ծննդեան կապ ունէ՞ր: Դիտենք, որ ոչ: Քանի որ այդպէս է, ինչո՞ւ համար է այս ազգաբանութիւնը, անօգուտ չէ՞:

Յիսուս օրէնքին առջեւ Յովսէփի որդին եղաւ, ուստի այս ազգաբանութեան մէջ Յովսէփի հետ Յիսուսի կապը «օրէնքի աչքով» կապ էր: Իսկ այսպէս արդեօք Յիսուս կը դադրի՞ Աբրահամի եւ Դաւիթ թագաւորի սերունդէն ըլլալէ:

Ան Աբրահամի սերունդէն էր, որովհետեւ Աբրահամի ցեղէն ծնաւ: Եւ Դաւիթ թագաւորի սերունդէն էր իր մօր ճամբով: Ղուկաս աւետարանիչի տուած ազգաբանութեան մէջ, Յիսուս Յովսէփի սերունդէն չէ, այլ Մարիամի: Մարիամ Իսրայէլի երկու ցեղէ կու գար. մէկ կողմով Ղեւիի, այսինքն՝ քահանայական ցեղին կը կապուէր, միւս կողմով՝ Դաւիթեան տունին: Հետեւաբար, մարմնաւոր ճամբով Յիսուս չէր դադրեր ուղղակի Դաւիթ թագաւորի ցեղէն ըլլալէ: Քանի այս էր իրականութիւնը, ինչո՞ւ համար Մատթէոս աւետարանիչ Յովսէփի կապած էր Յիսուսը: Նկատի ունենայով, որ իր աւետարանը ուղղած էր առհասարակ հրեայ մտայնութեամբ հաւատացեալներու, եւ ըստ այդ մտայնութեան օրինական գիծն էր կարեւորը, ուստի աւետարանիչը Յովսէփեան նախնիները բովանդակող ազգաբանութիւն մը օգտագործած էր:

Այս ազգաբանութեան մէջ կը տեսնենք երկու ոչ-հրեաներու անուններ, որոնք նաեւ կիներ են:

Հետաքրքրականորեն բացի Մարիամէն յիշուած են երկու այլ կիները:

Երկու ոչ-հրեայ կիները:

Իսխար: Ո՞վ էր ան: Քանանացի նախկին պոռնիկ մը, որ իր տան մէջ Յեսուի Երիքով զրկած լրտեսները պահեց: Իր այս արարքին համար Երիքովը գրաւող խորայէլացիները խնայեցին զինք եւ իր հօր ամբողջ տունը: Ան պիտի յառէր Խորայէլի, եւ պիտի ըլլար մայրը Բոոսի, այսինքն՝ Դաւիթ թագաւորի մեծ-մեծ հօր:

Այլ կին մըն է Հուլթ, որ մովաբացի էր:

Հուլթ ամուսնանալով

Բոոսի՝ միացաւ

հրեայ ժողովուրդին:

Իսխար եւ Հուլթ

ազգաբանութեան ոչ-

Քրիստոս մէկ ազգի փրկիչը է:

հրեայ անուններն եւ, եւ երկուքն են ցանկին հինգ կիներէն: Մատթէոս աւետարանիչ կրնար չյիշել զանոնք: Անկասկած, աւետարանիչը բան մը ուզած է ըսել: Ղուկաս աւետարանիչին պէս՝ Մատթէոս ալ մտածած է, թէ Քրիստոս մէկ ազգի փրկիչը է: Թէեւ ան Յիսուսը դիտած է մէկ ազգի, այսինքն՝ հրեայ ցեղի սահմանին մէջ, սակայն նոյն ատեն ուզած է թելադրել, որ Քրիստոս օտարներուն կամ այլ ազգերու համար ալ է: Այլ բացատրութեամբ մը. քանի Քրիստոսի նախնիներուն մէջէն Աստուած օտարները զանց չըրաւ, եւ օտարները իրենք ալ դեր ունեցան դէպի Յիսուս սերունդներու օղակները պահպանելու մէջ, ուրեմն կը նշանակէ որ Աստուած իր փրկութիւնը օտարներուն ալ վրայ կը տարածէ: Այս ճշմարտութիւնը մեզի համար կրնայ այնքան նշանակութիւն չունենալ, որքան հրեայի մը՝ որ մանաւանդ Բաբելոնեան գերութենէն ետք՝ մինչեւ Քրիստոսի ժամանակները, եւ վերջն ալ, նոյնիսկ մինչեւ այսօր՝ գիտենք որ այլամերժ են:

Հետեւաբար, ազգաբանութեան մէջ այս օտար կիները յիշելով, աւետարանիչը ըսել կ'ուզէ, թէ երբ Աստուած ընդունել է եւ նոյնինքն Փրկիչին սերնդաբանութեան մէջ ներկայ են, ինչպէ՞ս կարելի է մերժել զանոնք:

Ազգաբանութեան երկու միւս կիներն են՝ Ուրիայի կինը կամ Սողոմոն թագաւորի մայրը, որուն անունը չէ տրուած, սակայն գիտենք, որ Բերսաբէ էր (Բ. Թգ 12.24): Եւ Թամարը՝ Յուդայի կինը:

Այս կիներուն ներկայութիւնը կ'ուզէ յայտնել, թէ Աստուած իր Օծեալին սերնդաբանութեան մէջ կիներուն դերը չ'անտեսեր, նոյնիսկ այնպիսի կիներու՝ որոնց անցեալը գայթակղալից եղած է: Յիսուս առիթով մը զինք հարցուփորձող կրօնականներու հետեւեալը ըսաւ. «...մաք-սաւորներն ու պոռնիկները պիտի կանխեն ձեզ եւ ձեզմէ առաջ պիտի մտնեն Աստուծոյ արքայութիւնը» (Մտ 21.31): Աստուած մեղաւոր մարդիկը կ'ընդունի եւ կը սրբէ: Յիսուսի

սերնդաբանութեան մէջ յիշուած բոլոր կիները Աստուծոյ օրհնութեան արժանացած են: Անոնց ցանկին գերագոյն օրհնութիւնը բացառիկ ընտրութեամբ մը հանգչած կը տեսնենք այն անձին վրայ, որ ծնողը պիտի ըլլար մեր Փրկիչին. Մարիամ Աստուածամայրը:

«Արդ, Աբրահամէն մինչեւ Դաւիթ կայտասնըչորս սերունդ, Դաւիթէն մինչեւ Բաբելոնեան գերութիւն՝ տասնըչորս սերունդ եւ Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս՝ տասնըչորս սերունդ» (1.17): Մատթէոս աւետարանիչի նախասիրութիւնն է դասաւորելը: Ուստի, Յիսուսի ազգաբանութիւնը երեք բաժիններու վերածած է: Ազգաբանութեան ամբողջ ցանկը կազմած է 42 անուններով. 3 x 14: Այս դասաւորումը արդեօք իրակա՞ն է: Աբրահամէն մինչեւ Դաւիթ արդեօք միայն 14 անձե՞ր կային, կամ Դաւիթէն Բաբելոնեան գերութիւն՝ միայն 14 անձե՞ր կային, եւ նո՞յնը Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս: Վստահաբար՝ ոչ: Որովհետեւ 14 անձեր բաւարար չէին այն ժամանակամիջոցները լեցնելու: Պարզ է, որ Աբրահամէն մինչեւ Քրիստոս շուրջ 1800 տարիներու ժամանակը 42 անձեր չէին կրնար լեցնել:

Իսկ ինչո՞ւ համար երեք 14-ներու վերածումը:

14 թիւին մասին յստակ բան մը չունինք, բացի անկէ որ երկու անգամ եօթին արդիւնքն է: Ծանօթ է, որ 7 թիւը եբրայեցիներուն համար խորհրդաւոր եւ կատարելութիւն կամ ամբողջութիւն արտայայտող թիւ մըն էր: Արդե՞օք այս ազգաբանութեան մէջ 14-ով ըսել ուզուածը այն է, թէ երեք հանգրուաններէն ամէն մէկը Աստուծոյ փրկագործութեան կատարելապէս ամբողջական մէջ շրջանը կը ներկայացնէ: Այս ենթադրութիւնը կարելիութիւն մըն է: Ուստի, երեք հանգրուաններէն առաջինը կարելի է կոչել «Աստուածպետական շրջան», որովհետեւ Աստուած ինք իր ժողովուրդը կը ղեկավարէ ն ա հ ա պ ե տ ն եր ու եւ մարգարէներու միջոցով. երկրորդը՝ «Մի ա պ ե տ ա կ ա ն շրջան», որովհետեւ Ա ս տ ու լ ծ ո յ ժողովուրդը կը ղեկա-վարուի թագաւորներու կողմէ. եւ երրորդ՝ «Նուիրապետական շրջան», որովհետեւ Աստուծոյ ժողովուրդը կը ղեկավարուի քահանայապետներու կողմէ: Այս եռեակ հանգրուանումներով կարծէք աւետարանիչը կը թելադրէ, որ Քրիստոս ոչ թէ միայն ժառանգորդն է մարգարէական, թագաւորական եւ քահանայապետական շնորհներուն, այլեւ ինք մարգարէն է, թագաւորն է եւ քահանայապետն է իր ժողովուրդին:

Քրիստոս ... ինք մարգարէն է, թագաւորն է եւ քահանայապետն է իր ժողովուրդին:

**ՅԱԶՈՐԴ ՇԱՔԹՈՒՄ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ**

Հինգշաբթի, 29 Մայիս 2008

11.00 > Աղոթաժողով՝

Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Շաբաթ, 31 Մայիս 2008

18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝

Հայ երիտասարդներուն համար

Կիրակի, 01 Յունիս 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. Էւ անմահ Պատարագ

13.00 > Մաղթանք Հանրապետական

**ԱրՏԱՅՈՒՄՆԵՐԻ
eglise58@sourphagop.com**

**ՅԱՏՈՒԿ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ
ԱՐԴԻ ԹԵՍԱՆԵՐՈՎ՝**

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**

ԱՄԷՆ ՇԱՔԱԹ ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԺԱՄԸ 6:30

ՀԻՔԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիւիմ:

ՍՈՂԱ ԹԵՐԹԻԿԸ Ե-ԱՄԱՆԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՒՐԿԵՅԷՔ
eglise58@sourphagop.com-ԻՆ

**ՀԱՄԱՆԵՐԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ**

ԲԱՅ Է

ԵՐԿՈՒԵԱՔԹԵԱ ՈՒՐԲԱԹ

ԺԱՄԸ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՃԵՅԷ ԿԱՊՈՒԻԼ ԲԱՐՏՈՒԱՐԻՆ՝

514 331 5445 x202

ԿԱՄ ՀՈՎԻՐՆ՝

514 331 5445 x203

ԿԱՄ ԳՐԵԼ ՀԵՏԵԻՔԵԼ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝

eglise58@sourphagop.com

**ՁԵՐ ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՒ ԱՆԽՕՐՕՔ
ԿԱՏԱՐԵՅԷ ԿԱՊՈՒԻԼՈՎ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ**

Ս. ՅԱԿՈԲ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
28ՐԴ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ
ԱՄԱԿԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

ԿԻՐԱԿԻ

8 ՅՈՒՆԻՍ 2008

ԺԱՄԸ 13.30

**Ս. Յակոբ Վարժարանի
Բաստրմաճեան սրահ**

Հրաւեր՝ բոլորին:

Մանրամասնութեանց համար դիմել

Տնօրէնին՝ Պրն Թորոս Պապիկեանին

514 956 1277 կամ

director@sourphagop.org

կայքէջ՝

www.sourphagop.org